27. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

28. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

29. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. Նախադպրոցական ուսումնական հաստատությունը ըստ տեսակի

մանկապարտեզ է՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ.

31. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:

32. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

33. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

34. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

35. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

ԳԼՈՒԽ 4
ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

36. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

37. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

38. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

39. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

40. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

41. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

ԳԼՈՒԽ 5
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

42. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը (պետական և համայնքային հաստատությունների դեպքում), գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

43. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

44. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

45. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

46. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

47. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

50. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

51. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

52. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

53. Դաստիարակը՝

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

54. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

55. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

ԳԼՈՒԽ 6
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

56. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

57. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

58. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

59. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

60. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

61. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

62. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

63. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

64. Պետական հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

65. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պետական հաստատությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես հաստատությանը իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան հաստատությանը փոխանցելու համար:

66. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

67. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

68. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

69. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

70. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

71. Պետական կամ համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

72. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

73. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

74. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 183 -Ա որոշման
«Հավելված 3
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
ավագանու
2025 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 248 -Ա որոշման»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ «ԱՅԳԱԲԱՑ ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 21

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքի միավորը	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	ամսեկան աշխատավարձի ֆոնդ	Տարեկան աշխատավարձի ֆոնդ
1	Տնօրեն	1	1	1	198000	198000	2574000
2	Մեթոդիստ, ուս.գծով տնօրենի տեղակալ	1	0.5	0.5	132000	66000	858000
3	Բուժքույր	1	1	1	121000	121000	1573000
4	գլխավոր հաշվապահ	1	0.5	0.5	121000	60500	786500
5	Դաստիարակ	1	1.17	1.17	132000	154440	2007720
6	Դաստիարակ	2	2.34	2.34	132000	308880	4015440
7	Հոգեբան	1	1	1	132000	132000	1716000
8	Դաստիարակի օգնական	1	1	1	121000	121000	1573000
9	Դաստիարակի օգնական	2	2	2	121000	242000	3146000
10	Խոհարար	1	1	1	115500	115500	1501500
11	խոհարարի օգնական	1	0.5	0.5	115500	57750	750750
12	Տնտեսվար	1	0.5	0.5	115500	57750	750750
13	Երաժշտության ղեկավար	1	0.5	0.5	132000	66000	858000
14	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	0.5	0.5	132000	66000	858000
15	օժանդակ բանվոր	1	0.5	0.5	115500	57750	750750
16	պահակ	1	1	1	115500	115500	1501500
17	Այգեպան	1	1	1	115500	115500	1501500
18	Հավաքարար	1	0.5	0.5	115500	57750	750750
19	լվացարար	1	0.5	0.5	115500	57750	750750
	ԸՆԴԱՄԵՆԸ	***21***		***16.5***		***2171070***	***28223910***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 184-Ա

15 հոկտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ» ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՆՕՐԵՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱԶԳԱՆՈՒՆ ՍՈՒՐԵՆԻ ՄՆԱՑՅԱՆԻՆ ԵՎ «ՈՒՍՈՒՑՉԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՕԳՆԱԿԱՆ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ «ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆ ԱՆՈՒՇ ՌՈԲԵՐՏԻ ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԱՐԺԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 170-Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայրի վարչական ղեկավարի 2026 թվականի հոկտեմբերի 1-ի, Մեծ Սարիար բնակավայրի վարչական ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 23-ի, Կամո բնակավայրի վարչական ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 18-ի, Ազատան բնակավայրի վարչական ղեկավարի 2026 թվականի սեպտեմբերի 15-ի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2026 թվականի հոկտեմբերի 6-ի գրությունները և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 1705-Ա հրամանը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2026 թվականի բյուջեի 10-րդ բաժնի 07 խմբի 01 դասի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) ծրագրի «Կրթության, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» 4727,31 հոդվածով հատկացված գումարներից դրամական աջակցություն տրամադրել.

1) 2026 թվականի օգոստոսի 15-ին կրոսավազքի Հայաստանի առաջնությունում առաջին տեղն զբաղեցրած Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայրի բնակիչ Սաթենիկ Վարանցովի Մանուկյանին՝ 80 000 (ութսուն հազար) դրամ, մարզիչ Պետրոս Գարեգինի Աբրահամյանին՝ 40 000 (քառասուն հազար) դրամ:

2) 2026 թվականի սեպտեմբերի 12-ին ըմբշամարտի միջազգային մրցաշարում առաջին տեղն զբաղեցրած Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի բնակիչ՝ Մանվել Արծվիկի Խնձրցյանին՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ, մարզիչ Կարապետ Վաչագանի Ենգոյանին՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ:

3) 2026 թվականի հունիսի 27-ին աթլետիկայի պատանիների Հայաստանի առաջնությունում առաջին տեղն զբաղեցրած Ախուրյան համայնքի Մեծ Սարիար բնակավայրի բնակիչ Հայկ Վահրամի Պապիկյանին՝ 80 000 (ութսուն հազար) դրամ:

4) 2026 թվականի հուլիսի 28-30-ը Եվրոպական մանկական աթլետիկական խաղերում երրորդ տեղն զբաղեցրած Ախուրյան համայնքի Կամո բնակավայրի բնակիչ Արծրուն Գարիկի Հարությունյանին՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ:

5) 2026 թվականի հունիսի 20-21-ը Բալկանյան առաջնությունում եռացատկ մրցաձևում երկրորդ տեղն զբաղեցրած Ախուրյան համայնքի Կամո բնակավայրի բնակիչ՝ Ռազմիկ Գևորգի Ղազարյանին՝ 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ:

6) 2025-2026 ուսումնական տարվա «Տարվա լավագույնները» մրցույթում նախադպրոցական ուսումնական հաստատության լավագույն տնօրեն ճանաչված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի բնակիչ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ազգանուշ Սուրենի Մնացյանին՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ:

7) 2025-2026 ուսումնական տարվա «Տարվա լավագույնները» մրցույթում «Ուսուցչի լավագույն օգնական» անվանակարգում հաղթող ճանաչված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Վահրամաբերդ բնակավայրի բնակիչ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչի օգնական Անուշ Ռոբերտի Ղարագուլյանին՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ՇԱՄԻՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԱՍՅԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎԱԶԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԶՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԹՈՐՈՅԱՆ

ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
/փոխարինող/

2026 թվականի հոկտեմբերի 15
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 185-Ա

15 հոկտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳԵՏՔԻ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ԱՐՏՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գետքի գեներալ-մայոր Արտուշ Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2026 թվականի սեպտեմբերի 25-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2026 թվականի վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 4637 հոդվածից (այլ ընթացիկ դրամաշնորհ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գետքի գեներալ-մայոր Արտուշ Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) դրամ՝ սպորտային գույք և էլեկտրական տաքացուցիչ գնելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ՇԱՄԻՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԱՍՅԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԶՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԹՈՐՈՅԱՆ

ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
/փոխարինող/

2026 թվականի հոկտեմբերի 15
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 186-Ա

15 հոկտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 276-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին՝ որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 09-ի «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Տեղական զարգացման հիմնադրամ»-ի շրջանակներում «Համայնքների կարողությունների բարելավում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտում» նախաձեռնությանը մասնակցելուն համաձայնություն տալու և համաֆինանսավորումն ապահովելու մասին» թիվ 276-Ա որոշման մեջ կատարել հերևյալ փոփոխությունը

1) 2-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2026 թվականի վարչական բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերի չպատկանող) ծրագրից այլ կապիտալ դրամաշնորհներ 4657 հոդվածից» բառերը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ՇԱՄԻՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԱՍՅԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԶՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԹՈՐՈՅԱՆ

ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ**
/փոխարինող/

2026 թվականի հոկտեմբերի 15
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 187-Ա

15 հոկտեմբերի 2026 թվական

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ, ԱՌԱՓԻ, ԱԶԱՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵՐԵՔ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի դրույթով,հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 10-ի թիվ 210 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 2026 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 9, սեպտեմբերի 16-ի թիվ 10 և սեպտեմբերի 25-ի թիվ 11 ակտերը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի բնակիչ Գարեգին Սեդրակի Հովհաննիսյանի, Ախուրյան բնակավայրի բնակիչ Անահիտ Վանիկի Հովիկյանի և Առափի բնակավայրի բնակիչ Սանասար Աշոտի Խուրշուդյանի դիմումները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2026 թվականի վարչական բյուջեի 10-րդ բաժնի, 7-րդ խմբի 1-ին դասի «Այլ նպաստներ բյուջեի» 4729 հոդվածից տրամադրել վնասի մասնակի փոխհատուցում՝ ընդամենը 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամ որից՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրում 2026 թվականի սեպտեմբերի 4-ին բռնկված հրդեհի հետևանքով տուժած 36-րդ փողոց, 39-րդ տան բնակիչ Գարեգին Սեդրակի Հովհաննիսյանին՝ 200000 /երկու հարյուր հազար/ դրամ,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրում 2026 թվականի օգոստոս ամսին ուժեղ քամու հետևանքով տուժած Հ. Շահբազյան փողոց, 11-րդ տան բնակիչ Անահիտ Վանիկի Հովիկյանին՝ 50000 /հիսուն հազար/ դրամ,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Առափի բնակավայրում 2026 թվականի օգոստոս ամսին ուժեղ քամու հետևանքով տուժած 1-

ին փողոց, 55-րդ տան բնակիչ Սանասար Աշոտի Խուրշուդյանին՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ՇԱՄԻՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԱՍՅԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԶՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԹՈՐՈՅԱՆ

ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

/փոխարինող/

2026 թվականի հոկտեմբերի 15
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 188-Ա

15 հոկտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-004-0626-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑՈՂ 0,205837 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշման 2-րդ հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2026 թվականի մարտի 2-ի թիվ Կ-02032026-08-0153 որոշումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին՝ որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի տարածքում գտնվող, իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր չունեցող, սակայն ըստ էլեկտրոնային կադաստրային քարտեզի քաղաքացու սեփականություն համարվող 08-004-0626-0001 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում նոր առաջացող 0,205837 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը:
2.Սահմանված կարգով հողամասի նկատմամբ իրավունքները ներկայացնել պետական գրանցման և համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ՇԱՄԻՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԱՍՅԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԶՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԹՈՐՈՅԱՆ

ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ**
/փոխարինող/

2026 թվականի հոկտեմբերի 15
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 189-Ա

15 հոկտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԵԿ ԿՏՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրնսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 3-րդ մասի, 94-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրերի տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի պահպանության գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու, բերրիությունը բարձրացնելու և նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով օգտագործման տրամադրել վարձակալության իրավունքով:

2. Հաստատել հողամասի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթի պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ՇԱՄԻՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԱՍՅԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎԱԶԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԶՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԹՈՐՈՅԱՆ

ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
/փոխարինող/

2026 թվականի հոկտեմբերի 15
գյուղ Ախուրյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու 2026 թվականի
հոկտեմբերի 15-ի թիվ 189 -Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ

Վ	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայական N	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողի որակական հատկանիշը		Օգտագործման տրամադրման նպատակը	Հաղորդակցության ուղիների առկայությունը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Մրցույթի ձևը	Վարձակալության ժամկետը (տարի)	Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)
						Հողի կարգ	Ջրովի/անջրդի						
2	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Մայիսյան	08-077-0221-0040	գյուղատնտեսական	վարելահող	0,1	III	ջրովի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	Չկան	Բաց	25	8000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 190-Ա

15 հոկտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-108-0025-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄ ՎԱԶԳԵՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 և 39-րդ կետերի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ ինքնակամ շինություններն իրականացրած քաղաքացին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Վահրամաբերդ գյուղի բնակիչ՝ Արամ Վազգենի Հայրապետյանը 2024 թվականի հունիսի 24-ի իր դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Ախուրյան համայնքի սեփականությունը համարված 215,86 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունները, ինչպես նաև դրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-108-0025-0018 կադաստրային ծածկագրով 0,17679 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության, Շիրակի մարզի, Ախուրյան համայնքի սեփականությունը համարված 215,86 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի նշանակության

շինությունները, ինչպես նաև դրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված, 08-108-0025-0018 կադաստրային ծածկագրով, 0,17679 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Վահրամաբերդ, Բյուրական թաղամաս 2-րդ խճուղի, 18/3 անասնաշենք, իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 04062025-08-0035) ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով, 2078729 (երկու միլիոն յոթանասունութ հազար, յոթ հարյուր քսանինը) դրամ արժեքով, որից՝ 377323 (երեք հարյուր յոթանասունյոթ հազար, երեք հարյուր քսաներեք) դրամը շինությունների արժեքն է, իսկ 1701406 (մեկ միլիոն յոթ հարյուր մեկ հազար, չորս հարյուր վեց) դրամը՝ հողամասի, օտարել կառուցապատողին՝ քաղաքացի Արամ Վազգենի Հայրապետյանին (ծնված 1982 թվականի ապրիլի 14-ին):

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝

1) Սույն որոշման 1-ին կետում նշված վաճառքի ընդհանուր գնին հավելել տվյալ գույքային միավորի նկատմամբ, մինչև օտարումը համայնքի անվամբ իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արամ Վազգենի Հայրապետյանին պատշաճ ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ՇԱՄԻՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԱՍՅԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՋՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԹՈՐՈՅԱՆ

ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝

Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
/փոխարինող/

2026 թվականի հոկտեմբերի 15
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 191-Ա

15 հոկտեմբերի 2026 թվական

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԵՀԱՆՈՒՇ ՆԻԿՈՂՈՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-097-0045-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հողային օրնսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ օտարվող հողամասը բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներին և նույն որոշման 2-րդ կետի համաձայն չի դիտարկվում որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարման ենթակա հողամաս, հիմք ընդունելով քաղաքացի Վեհանուշ Նիկողոսի Գևորգյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին՝ որոշում է.

1. Քաղաքացի՝ Վեհանուշ Նիկողոսի Գևորգյանին (ծնված 1970 թվականի ապրիլի 29-ին) սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ջրառատ բնակավայրի 16-րդ փողոց, 6/1 հասցեի բնակելի տնով զբաղեցված 08-097-0045-0019 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,004611 հեկտար մակերեսով հողամասի ընդլայնման համար, դրա հարևանությամբ գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ջրառատ բնակավայրի 16-րդ փողոց, 6/6 հասցեի 08-097-0045-0021 կադաստրային ծածկագրով 0,004275 հեկտար մակերեսով, նույն նպատակային և գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդլայնվող հողամասի համասեփականատիրոջը՝ Վեհանուշ Նիկողոսի Գևորգյանին:

2. Սույն որոշման 1-ին կետով օտարվող հողամասի վաճառքի գինը հաստատել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի չափով՝ 9320 (ինը հազար, երեք հարյուր քսան) դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ՇԱՄԻՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԱՍՅԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎԱԶԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԶՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԹՈՐՈՅԱՆ

ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ**
/փոխարինող/

2026 թվականի հոկտեմբերի 15
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 192-Ա

15 հոկտեմբերի 2026 թվական

ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈԲԵՐՏ ՖՐՈՒՆԶԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-007-0624-0054 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հողային օրնսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ օտարվող հողամասը բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներին և նույն որոշման 2-րդ կետի համաձայն չի դիտարկվում որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարման ենթակա հողամաս, հիմք ընդունելով քաղաքացի Ռոբերտ Ֆրունզի Անտոնյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին՝ որոշում է.

1. Քաղաքացի՝ Ռոբերտ Ֆրունզի Անտոնյանին (ծնված 19/12/1960 թվականի դեկտեմբերի 19-ին) սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Գյումրու խճուղի 9 հասցեի խանութի շենքով զբաղեցված 08-007-0624-0054 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,01704 հեկտար մակերեսով հողամասի ընդլայնման համար, դրա հարևանությամբ գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Գյումրու խճուղի 7/2 հասցեավորմամբ 08-007-0624-0064 կադաստրային ծածկագրով 0,00396 հեկտար մակերեսով, նույն նպատակային և գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդլայնվող հողամասի համասեփականատիրոջը՝ Ռոբերտ Ֆրունզի Անտոնյանին:

2. Սույն որոշման 1-ին կետով օտարվող հողամասի վաճառքի գինը հաստատել հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 48352 (քառասունութ հազար, երեք հարյուր հիսուներկու) դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ՇԱՄԻՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԱՍՅԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԶՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԹՈՐՈՅԱՆ

ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

/փոխարինող/

2026 թվականի հոկտեմբերի 15
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 193-Ա

15 հոկտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0140-0021 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0878 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշման 2-րդ հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին՝ որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող, իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր չունեցող, սակայն ըստ էլեկտրոնային կադաստրային քարտեզի քաղաքացու սեփականություն համարվող 08-007-0140-0021 կադաստրային ծածկագրով 0,0878 հեկտար մակերեսով հողամասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը:

2.Սահմանված կարգով հողամասի նկատմամբ իրավունքները ներկայացնել պատական գրանցման և համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ՇԱՄԻՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԱՍՅԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՎԱԶԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԶՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԹՈՐՈՅԱՆ

ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ**
/փոխարինող/

2026 թվականի հոկտեմբերի 15
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 194-Ա

15 հոկտեմբերի 2026 թվական

